

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

_____ 2017 թվականի

N _____ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1191-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկը հաստատելու մասին» N 1191-Ն որոշման հավելվածում՝

1) <<

042101.00.6 042101.00.7	Իրավագիտություն	Իրավագիտության բակալավր Իրավագիտության մագիստրոս
----------------------------	-----------------	---

>> պարբերությունից հետո լրացնել նոր բաժին հետևյալ բովանդակությամբ՝ <<

0428 Միջուրտային մասնագիտություններ		
042801.00.6 042801.00.7	Դատական փորձաքննություն	Դատական փորձաքննության բակալավր Դատական փորձաքննության մագիստրոս

>>,

2) <<

071802.00.6 071802.00.7	Արդյունաբերական ճարտարագիտություն	Ճարտարագիտության բակալավր Ճարտարագիտության մագիստրոս
----------------------------	-----------------------------------	---

>> պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ՝ <<

071803.00.6 071803.00.7	Մեխատրոնիկա	Ճարտարագիտության բակալավր Ճարտարագիտության մագիստրոս
----------------------------	-------------	---

>>:

3) <<

042101.00.6 042101.00.7	Jurisprudence	Bachelor of Laws Master of Laws
----------------------------	---------------	------------------------------------

>> պարբերությունից հետո լրացնել նոր բաժին հետևյալ բովանդակությամբ՝ <<

0428 Inter-disciplinary specialties		
042801.00.6	Forensic science	Bachelor of Forensic science
042801.00.7		Master of Forensic science

>> ,

4) <<

071802.00.6	Industrial engineering	Bachelor of Mechatronics
071802.00.7		Master of Mechatronics

>> պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ՝ <<

071803.00.6	Mechatronics	Bachelor of Mechatronics
071803.00.7		Master of Mechatronics

>>:

5) <<

042101.00.6	Юриспруденция	Бакалавр юриспруденции
042101.00.7		Магистр юриспруденции

>> պարբերությունից հետո լրացնել նոր բաժին հետևյալ բովանդակությամբ՝ <<

0428 Междисциплинарные специальности		
042801.00.6	Судебная экспертиза	Бакалавр судебной экспертизы
042801.00.7		Магистр судебной экспертизы

>> ,

6) <<

071802.00.6	Промышленная инженерия	Бакалавр инженерии
071802.00.7		Магистр инженерии

>> պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ՝ <<

071803.00.6	Мехатроника	Бакалавр инженерии
071803.00.7		Магистр инженерии

>>:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հիմնավորում

1. Անհրաժեշտությունը.

Հայաստանի Հանրապետության տնտեսության ամենահեռանկարային ոլորտներից է հանդիսանում Ճարտարագիտության ոլորտը: Հայաստանում Մեխատրոնիկա մասնագիտության զարգացման համար առկա է անհրաժեշտ ներուժ, կան ենթակառուցվածքներ, որոնք կարող են ապահովել այդ մասնագիտության կայացումը:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ «Դատական փորձաքննություն» և «Մեխատրոնիկա» մասնագիտությունները ունեն բավական բարձր վարկանիշ: Վերոնշյալ մասնագիտությունների բացումը լուրջ նախադրյալներ կստեղծի ՀՀ-ում համապատասխան ոլորտի զարգացմանը /Դատական փորձաքննություն/, ինչպես նաև նորարարությանը և ստեղծարարությանը /Մեխատրոնիկա/, ինչը ժամանակի հրամայականն է:

3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը.

Գործող քաղաքականության փոփոխություն չի նախատեսվում:

4. Կարգավորման նպատակը և բնույթը.

Նախագծի նպատակն է Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկում ներդնելու «Դատական փորձաքննություն» և «Մեխատրոնիկա» մասնագիտությունները և համապատասխան որակավորումները:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

6. Ակնկալվող արդյունքը.

Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկում նոր «Դատական փորձաքննություն» և «Մեխատրոնիկա» մասնագիտությունների և համապատասխան որակավորումների ընդգրկումը:

Տեղեկանք

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ հոկտեմբերի 23-ի N 1191-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման բյուջեների վրա ազդեցության մասին

Որոշման ընդունման կապակցությամբ պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումներ կամ նվազեցումներ չեն սպասվում:

Տեղեկանք

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. հոկտեմբերի 23-ի N 1191-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ իրավական ակտերի կամ դրանց ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

1. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մասին ընդունման առնչությամբ այլ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտություն չկա:
2. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը չի հակասում միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին:

ՏԵՂԵԿԱՆՔ

<< Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 23-ի N 1191-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին >>

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
<p style="text-align: center;">ՀՀ ֆինանսների նախարարություն</p> <p style="text-align: center;">սեպտեմբերի 8-ի թիվ 01/9-2/16305-17 գրություն</p>	<p style="text-align: center;">Դիտողություններ և առաջարկություններ չունի:</p>		
<p style="text-align: center;">ՀՀ արդարադատության նախարարություն</p> <p style="text-align: center;">սեպտեմբերի 26-ի թիվ 01/14/16917-17 գրություն</p>	<p style="text-align: center;">Դիտողություններ և առաջարկություններ չունի:</p>	<p>Նախագիծը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին:</p>	
<p style="text-align: center;">Հանրային քննարկում</p>	<p style="text-align: center;">Դիտողություններ և առաջարկություններ չունի:</p>		